

«Հաստատում եմ»

Մոր և մանկանատոհղության պահպանման  
գիտահետազոտական կենտրոնի տնօրեն,  
բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Գ. Օկոն



Կարծիք

Առաջատար կազմակերպություն

Գայանե Յուրիկի Մկոյանի «Էնդոմետրիումի հիպերպլաստիկ պրոցեսների բուժման և հետազոտման օպտիմալացումը հիպոթիրեոզ ունեցող կանանց մոտ» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԴ 00.01. «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գայանե Մկոյանի ատենախոսությունը արդիական է և նվիրված հիպոթիրեոզով տառապող կանանց մոտ էնդոմետրիումի հիպերպլազիայի բուժման և հետազոտման օպտիմալացմանը:

Ատենախոսությունը կառուցված է ավանդական ձևով: Այն շարադրված է համակարգչային 105 էջի վրա և կազմված ներածությունից, գրականության ակնարկից, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրումից, սեփական հետազոտությունների արդյունքների ներկայացումից և դրանց քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, գրականության ցանկից: Ատենախոսական աշխատանքը պատկերազարդված է 19 աղյուսյակներով և 4 նկարներով: Գրականության ցանկը կազմված է 196 սկզբնաղբյուրներից, որոնցից 98-ը ռուսալեզու և 98-ը օտարալեզու:

Ատենախոսության նախաբանում հիմնավորված է ատենախոսական աշխատանքի արդիականությունը, ձևակերպված են նպատակը և նպատակին հասնելու հինգ խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Գրականության անալիտիկ տեսությունը՝ «Էնդոմետրիումի հիպերպլաստիկ պրոցեսներ. բնորոշման, դասակարգման, ախտորոշման և բուժման հարցեր»

շարադրված է ստենախոսության առաջին գլխում: Այն բաղկացած է 7 ենթագլուխներից, ուր ներկայացված են գրականության տվյալներ էնդոմետրիումի հիպերպլազիայի, դրա պրոգրեսիվման և կրկնման ռիսկի գործոնների, վահանագեղձի դիսֆունկցիայի, որպես էնդոմետրիումի հիպերպլազիայի ռիսկի գործոնի, էնդոմետրիումի հիպերպլազիայի դասակարգման, ախտորոշման և բուժման խնդրահարույց հարցերի, ախտորոշման և բուժման վերաբերյալ: Գրականության տեսությունը շարադրված է գրագետ և ավարտվում է եզրակացությամբ, ուր ի մի են բերված հարցի արդիականության, ախտորոշման և բուժման իրարամերժ և լուծում պահանջող խնդիրները:

Ստենախոսության երկրորդ գլխում ներկայացված են հետազոտության նյութն ու մեթոդները: Հետազոտության հիմքում ընկած են «Իզմիրյան» ԲԿ, «Բեզլարյան» ԲԿ, թիվ N8 պոլիկլինիկա գինեկոլոգիական ծառայության համար դիմաց էնդոմետրիումի հիպերպլազիայով 180 կանանց տվյալները: Ստուգիչ խումբը կազմել են 60 հիվանդացելուներ, որոնք ունեցել են էնդոմետրիումի հիպերպլազիա առանց հիպոթիրեոզի: Հիմնական խումբը կազմել են 120 կին որոնց մոտ առկա է եղել էնդոմետրիումի հիպերպլազիա համակցված հիպոթիրեոզի հետ ,ընդ որում վերջինս ախտորոշվել է առաջնակի: Վահանաձև գեղձի դիսֆունկցիայով կանայք բաժանվել են 3 խմբերի, կախված հիպոթիրեոզի ծանրության աստիճանից՝ սուբկլինիկական, մանիֆեստ և կոմպենսացված հիպոթիրեոզ: Բոլոր խմբերը բաժանվել են 2 ենթախմբերի, կախված կիրառված բուժման մեթոդից՝ վահանաձև գեղձի դիսֆունկցիայի կորրեկցիա և կանայք որոնք ստացել են էնդոմետրիումի հիպերպլազիայի և հիպոթիրեոզի համակցված թերապիա:

Գիտական աշխատանքի իրականացման նպատակով կիրառվել են հետազոտության կլինիկական, լաբորատոր և գործիքային ժամանակակից մեթոդներ՝ վահանագեղձի և կոնքի օրգանների գերձայնային հետազոտություն, էնդոմետրիումի ախտորոշիչ քերուկ՝ հետագա հյուսվածաբանական հետազոտությամբ, հորմոնների որոշում արյան շիճուկում և այլն: Հետազոտման իրականացված ծավալը բավարար է,իսկ աշխատանքի իրականացման համար կիրառված հետազոտման մեթոդները ժամանակակից:

Ստենախոսության երրորդ գլխում ներկայացված են սեփական հետազոտության արդյունքները: Ներկայացված են հետազոտված կանանց

կլինիկական բնութագիրը: Համաձայն ստացված տվյալների հիպոթիրեոզով կանանց մեկ երրորդի տարիքը միջինը տատանվել է քսանհինգից երեսուն տարվա սահմաններում, այն ուղեկցվել է մարնի ավելցուկային քաշով: Նման կանանց մոտ առավել հաճախ է ախտորոշվել մասթոպաթիա, ձվարնների պոլիկիստոզ համախտանիշ և հիպերպրոլակտինեմիա գրեթե երկու անգամ ավելի հաճախ քան ստուգիչ խմբում: Հիպոթիրեոզի ֆոնին էնդոմետրիումի հիպերպլազիայի դեպքում արձանագրվել է էստրադիոլի մակարդակի վիճակագրորեն հավաստի նվազում: Ուշադրության է արժանի քրոնիկ էնդոմետրիտի ախտորոշումը էնդոմետրիումի հիպերպլազիայով կանանց մոտ վահանագեղձի ախտաբանության առկայության և բացակայության դեպքում: Պարզվել է, որ ինչպես հիպոթիրեոզի առկայության, այնպես էլ բացակայության դեպքում առավել հաճախ ախտորոշվել է էնդոմետրիումի հասարակ հիպերպլազիա:

Ատենախոսական աշխատանքի չորրորդ գլխում ներկայացված են հետազոտված կանանց կլինիկո-լաբորատոր հետազոտության տվյալները և բուժման արդյունքերը: Արձանագրվել է հիպոթիրեոզի և էնդոմետրիումի դեպքում վահանագեղձի ծավալի փոքրացում ի համեմատ նորմալի: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ էնդոմետրիումի բուժման արդյունավետությունը գրեթե հավասարազոր է ինչպես միայն վահանաձև գեղձի ֆունկցիայի կորրեկցիայի, այնպես էլ զուգորդված բուժման ժամանակ, ուր կիրառվել են և՛ վահանաձև գեղձի ֆունկցիայի կորրեկցիա և՛ հեստագեններ կամ կոմբինացված օրալ հակաբեղմնավորիչներ:

Ստացված տվյալներ ցույց են տվել, որ հիպոթիրեոզով և էնդոմետրիումի հիպերպլազիայով կանանց առավել արդյունավետ բուժման մեթոդը լեոնորգեստրել պարունակող ներարգանդային պարույ Միրենան է, թեև տվյալները սակավ են:

Պետք է նշել, որ իրականացված է ոչ թե ստացված տվյալներ ուղղակի փաստում, այլ դրանց համեմատական և քննադատական վերլուծություն՝ համադրելով գրականության տվյալների հետ:

Եզրակացությունները՝ թվով յոթ, բխում են ստացված արդյունքներից: Գործնական առաջարկները՝ թվով չորս, ունեն կարևոր գիտական և գործնական նշանակություն: Դիանք գինեկոլոգների առօրյա աշխատանքի ուղեցույցներ են

էնդոմետրիումի հիպերպլազիայով և հիպոթիրեոզով կանանց հետազոտման և բուժման դեպքում:

- Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները.
- ա/ Ատենախոսական աշխատանքում առկա են որոշ ուղղագրական սխալներ, վրիպակներ:
  - բ/ Ատենախոսական աշխատանքի մեջ առկա որոշ աղյուսակները մեծ են, պարունակում են զգալի ծավալով տվյալներ, ինչը դժվարեցնում է նյութի ընկալումը:
  - գ/ Մեր կարծիքով թիվ երեք գործնական առաջարկը ավելի ճիշտ կլիներ ներկայացնել որպես եզրակացություն:

Սակայն ներկայացված դիտողությունները սկզբունքային չեն և չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի արժեքականությունը:

Սեղմնագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Եզրակացություն: Գայանե Յուրիկի Մկոյանի «էնդոմետրիումի հիպերպլաստիկ պրոցեսների բուժման և հետազոտման օպտիմալացումը հիպոթիրեոզ ունեցող կանանց մոտ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից բժշկության կարևոր խնդիրներից մոկին, հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Բովանդակությամբ, ծավալով, նյութի մշակման և վերլուծության մակարդակով, ստացված արդյունքներով և գիտական նշանակությամբ այն համապատասխանում է ՀՀ-ի ԲՈՂ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդը արժանի է բժշկակն գիտությունների թեկնածուի աստիճանի ԺԴ.00. «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի» գիտական խորհրդի 2021թ. հունիսի 7-ի նիստում (արձանագրության թիվ 2), որին ներկա էին գիտական խորհրդի 13 անդամներից 12-ը. բ.գ.դ. պրոֆեսոր Գ.Գ.Օկոնը (ԺԴ.00.01), բ.գ.դ., պրոֆեսոր Կ.Կ.Առուստամյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ., Մ.Գ.Շահինյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ա. Հ. Խաչատրյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Է. Ս. Տոտյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ.

